ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03

<<ՀՔԱՍ-ԳՀԱՊՁԲ-04/19>> ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշման արձանագրություն

ք.Հրազդան 23.04.2019թ.

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

/Վ.ՊՈՂՈՍՅԱՆ/

Ընդունել ի գիտություն՝

1.1 ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526 -Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացվելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ:

1.2 ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526 -Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցում էր ուղարկվել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով սահմանված փաստաթղթերի պահանջի վերաբերյալ: Սահմանված ժամկետում և սահմանված կարգով մասնակցի կողմից ներկայացվել էր որակավորման չափանիշները հաստատող փաստաթղթերը:

2. Ընթացակարգի հայտերը գնահատելու և պայմանագիր կնքելու որոշման մասին

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.1 և 1.2 կետերը հանձնաժողովը որոշեց հաստատել

առաջին տեղ զբաղեցրած մասնակցի գնահատման արդյունքները, ինչպես նաև

<<ՀՔԱՍ-ԳՀԱՊՁԲ-04/19>> ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել

<<Լարգո Վինչ>> ՍՊԸ-ին՝ վերջինիս առաջարկելով <<Սեղմված բնական գազի>> մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5 , դեմ 0 :

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Վ.Պողոսյան

Անդամներ՝ ---------- Գ.Օհանյան

---------- Ա.Գալստյան

---------- Յ. Ավագյան

---------- Պ. Արզումանյան

Գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ք.Բաղդասարյան